


3379

Ա. ԿԵՐՈՎԱՆՅԱՆ

1014

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ  
ԿԻՆՈ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ  
ԿԻՆՈՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ




Գ 8 0 1 9 4 2 0 8

1934

36064, 06

778.5  
4-53

Ա. Կիբակովսկի



ՄԱՍՍԱՅԱԿԱՆ  
ԿԻՆՈԱՇԽԱՏԱԳՐ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԿԻՆՈԱՇԽԱՏԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՎԻ ՀԱՄԱՐ

(1921)

22.05.2013

3379

25 OCT 2010

Պատ. խմբագիր՝  
Դ. ԳԶՆՈՒՆԻ

### ՅԵՐԿՈՒ ԽՐԱՄ

Կուլտուրական կենոյի կազմակերպման և կինոյի շուրջը մասսայական, քաղդաստիարակչական աշխատանքների ծավալման գործում մի կողմից՝ անհրաժեշտ փորձի բացակայությունը և մյուս կողմից՝ հայերեն լեզվով համապատասխան գրականություն չունենալը՝ մեր առաջ հրամայողական անհրաժեշտությամբ գրեցին կինո մասսայական աշխատանքներով զբաղվող կուլտուրակայինի համար լույս ընայել մի հանրամատչելի ուղղեցույց։ Թյուրիմացությունից խուսափելու համար պիտի նշել, վոր այս աշխատությունն որգինա բնույթ չունի, այլ ավելի շուտ իրենից ներկայացնում և այդ ուղղությումք յեղած ոռուսերեն գրականության հանրամատչելի շաբագրություն, հարմարեցրած Հայաստանի պայմաններին։

Զնայած այդ բանին, մենք համոզված ենք, վոր բրոցյուրը բոլոր հնարավորություններն ունի ոգնելու կինո մասսայական աշխատանքներով զբաղվող ընկերություն իր պրակտիկ աշխատանքների ժամանակ։

Մի կողմից անհրաժեշտ փորձի կուտակումը և մյուս կողմից կինո մանավավեկների արժեքավոր դիտողությունները բրոցյուրի թերությունների մասին՝ հնարավորություն կտան մեղ հետաքայում վերամշակելու բրոցյուրը, վերացնելու մի շարք թերությունները և ափելի վորակյալ զործ տալու կինո մասսայական աշխատողին։

ՀՍԽՀ ԺԿԽ-ին կից կինո-ֆոռա արդյունաբերության վարչության

Այլակը Խ. Այվազյան  
Հանձնվել է արտադրության թիվ 27-ին,  
Ստորագրվել է տպագրման 1934 թ. մայիսի 25-ին  
Գլանված 8939, Տիրամ 15 թիվում է 18  
Երևան, ԳՅՈՒՂՂԱՔԻ ՏԱՐԱՎ, ՆԱԼԱԿՑԱՆ 50



38037. 62

Կինոն կոթոհնեստական գլուխիլրպէնիթՅԱՆ ՀԶՈՒ  
ՄԻՋՈՅ Ե

Կինոն, վորպես արվեստի մի ճյուղ, բացառիկ կարևություն ունի հասարակական տնտեսական քաղաքական կյանքը հիմնովին վերափոխելու բնագավառում: Կինոն հզոր միջոց ե ներազդելու աշխատավորական լայն զանգվածների դիտակցական, հողեկան, գեղարվեստական, քաղաքական աշխարհի վրա, նրանց մորիլիզացիայի յենթարկելու սոցիալիստական շինարարության հրատապ խնդիրները լուծելու շուրջը: Հենց այդ պատճառով ել ընկ. կենինն ասել ե, վոր «արվեստի բոլոր ճյուղերից մեզ համար ամենակարևորն իմ կարծիքով՝ կինոն ե»:

Խոշոր հաջողություններ են ձեռք բերված սոցիալիզմի համար մզվող պայքարը կինոյի միջոցով վերաբերելու գործում: Սակայն կինոյի ոլորետարական բովանդակությունն ե—մատչելի ձևով լայն աշխատավորական մասսաներին հասցնել նրանց հուզող խնդիրները, սոցիալիստական շինարարության խնդիրները սերտորեն շաղկապելով մասսաների կինո սպասարկման գործի հետ և այդ միջոցով կինոն զարձնել սոցիալիստական սլանների կատարման հղորագույն միջոցներից մեկը: Կինոյի շուրջը տարվող մասսայական քաղաքական աշխատանքները հանդիսանում են այն կարևորագույն հատկությունը, վորով Խորհրդային կինեմատոգրաֆիան տարբերվում է բուրժուական կինոյից:

Խորհրդային կինոն չի կարող միայն կինոնկարների ցուցազրման վայր լինել: «Կինոն պիտի լինի պրոլետարիատի գործիքը մյուս դասակարգերի վրա իր հեգեմոնիայի ղեկավարությամբ և ազգեցության համար մզվող պայքարում, կուսակցության ձեռքում նապիտի հանդիսանա կոմունիստական լուսավորության և աղիտացիայի հղորագույն միջոցը»—առված է Համ. Կ. (բ) Կ. 13-րդ համագումարի բանաձևում: Այնուհետև կինոյի խնդիրը կայանում է այն բանում, վոր նապահովի սոցիալիզմի շինարարների՝ բանվորների և կուտանժեսականների ձգուումը կինոյից ստանալու հանույք, հանգիստ, իր կուլտուրական, քաղաքական մահարդակի բարձրացումը (Համ. Կ. Կ-ի դեկտեմբերյան պլենումի բանաձևեցից):

Կինոն պիտի լինի պրոլետարական և աշխատավորական մասսաների կուլտուրական հանդսաի գեղարվեստական սպասարկումը՝ նրանց սոցիալիստական վերադաստիճարական և քաղաքական լուսավորական աշխատանքների հետ խելացիունն շաղկապելու կուլտուրական ոջախը: Հենց այդ աշխատանքների վրա յի, վոր մինչև այժմս պատշաճ ուշադրություն չեն դարձել վոչ միայն կինո կազմակերպությունները, այլև շատ շրջանային կազմակերպություններ:

Չնայած այն խոշոր նշանակությանն ու դերին, վոր ունի կինոն սոցիալիզմի կառուցման և դասակարգերի լիկիվացիայի գործում, նա զեռևս չի արժանացել մեր մի շաբք շրջանային կազմակերպությունների պատշաճ ուշադրությանը:

Համարն, յեթե կատարվում է այս կամ այն նկարի սոսկ ցուցազրումը, կինո սպասարկումն ամբողջապես ապահոված է համարվում: Յերբեմն վորոշ աշխատանքներ միանդամայն սխալ են պատկերացնում մեր

ինպիրները կուլտուրական շինարարության բնագաւառում և միանգամայն անթույլատրելիության թերառնահատում են կուլտուրական հեղափոխության խընդիւնները, այդպիսին կրպակ կերպով անջատելով սույլալիստական շինարարության ընդհանուր գործիք: Անկամակած յուրաքանչյուրը կոմունիստ, կուսովիչի, հարվակային պիտի յնուանուն պայքար միջի կուսակցության առաջադրած պլանների կատարման համար, բաց խնդիրն ել այն ե, վոր կուսակցությունը սոցիալիզմի կառուցման կարեռագույն ճակատամասներից մեկը միշտ համարել և համարում է կուլտուրական հեղափոխությունը: Դրանում համոզվելու համար մեջ բրենք ընկել: Լենինի հետեւյալ խոսքերը.

«Մեզ համար բավկական է այժմ կույսուրական նեղափոխուրյունն, վորպեսզի դառնանք ամբողջապես սովորական յերկիր»:

Իսկ կուլտուրական հեղափոխության կարեռագույն ողակը կինոն ե, վորը սակայն պատշաճ գնահատության յերբեմն չի արժանանում:

Նման արամադրությունների արդյունք և նաև ան, վոր ինչպես կինոաշխատառները, նույնպես և պուդական ու շրջանային շատ կազմակերպությունները, անթույլատրելի կերպով թերագնահատում են կինո նկարի շուրջը ծավալելիք մասսայական քաղաքական աշխատանքները: Դեռ ավելին: Այդ բնագավառում—շատ շրջաններում—անդամառաջին քայլերը չեն սրված: Կինոմասսայական աշխատանքը թողնում են միայն մեխանիկի վրա: Այդ գործին չեն լծվում գյուղի կուլտուրական ուժերը:

ՀԱՆՁԵԼ, ՇՐՋԱՆԲ, ՏԱԼ, ՆԲԱՆ ՎՈՐՍԿՈՍԼ, ՈԵՊԵՐՏՈՒՄԸ

Ամենապլիավոր և անթույլատրելի բացը կինո սպասարկման բնագավառում այն ե, վոր մենք չու-

նենք մինչև այժմ ճշտված համապատասխան ռեպերտուր, վորի հետևանքով զյուղի և քաղաքի կինոսպասարկումը չի շաղկապիտմ անցկացվող տնտեսական-քաղաքական կամպանիաներին: Ուինակ՝ շատ հաճախ գարնանացանի վերաբերյալ նկարը գյուղի մտնում բերքահավաքի յեռուն շրջանում, կամ բամբակացան շրջաններն են ուղարկում ծխախոտագրձության վերաբերյալ ագրոֆիլմ և ընդհակառակը: Սա սրդյունք ե այն բանի, վոր շատ կինո-աշխատադիմք (հատկապես պրոկատի գծով) բավարար պատկերացում չունեն տվյալ շրջանի եկոնոմիկայի, կուլտուրական-քաղաքական կյանքի մասին, չգիտեն բնակչության կենցաղը, սովորությունները, մոտիկ անցրման պատկերը և այլն:

Այդ միանգամայն աննորմալ դրությանը վերջ տալու հաժար, անհրաժեշտ ե, վորպեսզի կինո աշխատողը, հատկապես կինո-մեխանիկը, լրիվ պատկերացնի տվյալ շրջանի տնտեսական-քաղաքական-կենցուղային պատկերը, յեթե նա ուզում է իր մասսայական-քաղաքական աշխատանքները գնի իրական հողի վրա, նա պետք ե նկարի բովանդակության համապատասխան փաստական նյութեր վերցնի տվյալ շրջանի կառուղի իրական կյանքից:

Այդ նպատակով միանգամայն անհրաժեշտ ե ունենալ յուրաքայլուր շրջանի պատրուտ-անցագիրը, վորում փաստական տվյալներով պետք ե ցույց տրվեն հետևյալ տեղեկությունները՝

1. Սպասարկվող կետերը, կետերի աշխարհագրական դիրքը, նրանց միջի տարածությունը, կապի և հաղորդակցության միջոցները, ազգաբնակության կաղմը (դասակարգային, ազգային, կուսակցական, սեռական),

2. Բնակչության զբաղմունքը (անասնապահություն, դաշտավարություն, արդյունաբերություն-մշակվող կուլտուրաներ, նրանց տեսակարար կշիռը և այլն):

3. Երջանի պատմական տնտեսական համառոտությագիծը, ուր պետք ե հիշատակվի քսաներորդ դարից սկսած պատմական դեպքերը, այն եւ մասնակցությունը հեղափոխական շարժումներին, խորհրդայնացման ետապները, պայքարը դաշնակցության դեմ, ազգայնական և կրօնական կազմակերպությունների դերը, չըջանի տնտեսական զարգացման հեռանկարները, շրջադարձային նախադումները—կիրառումը, կոլեկտիվացման հաջողությունները և այլն:

4. Կուլտուրական աճման համառոտությագիծը—գպրոցների, հիվանդանոցների, քաղլուս հիմնարկների թեկը, գրագիտության տոկոսը և այլ տվյալներ:

Այնուհետև տվյալներ կենցաղի, սովորությունների, կրօնական դավանանքի, հակակրօնական շարժման, խորհրդային, կուսակցական և այլ կազմակերպությունների կառուցվածքի և այլնի մասին:

Անցագը կարեն քաղաքական նշանակությունից յելնելով, անհրաժեշտ ե այդպիսին կազմելու աշխատանքներին մասնակից դարձնել վոչ միայն կինո աշխատադերին, այլև շրջանի կուսակցական, կոմյերիտական և խորհրդային կազմակերպություններին:

Այդպիսի անցագիրը լիակատար հնարավորություն և տալիս յուրաքանչյուր կինո աշխատողին կազմակերպմելու միջավայրին համապատասխան, ճիշտ կերպով նախադելու և պլանավորելու տվյալ շրջանի կինո սպասարկումը և քաղլուս մասսայական աշխատանքների կազմակերպումը:

Կինո սպասարկումը և մասսայական քաղաքական աշխատանքները ժաղավենի շուրջը, մեզ համար

ինքնանպատակ չեն: Այդ աշխատանքների նպատակը  
պիտի լինի՝ 1. նկարը ցուրբուժունելի դարձնել դիտողի  
համար, 2. մասսայի ուշադրությունը սրել սոցիալիս-  
տական շինարարության հաստապ խնդիրների վրա,  
3. նկարի բովանդակությանը համապատասխանող տե-  
ղական նյութերն ոգտագործել՝ պայքարելու զանազան  
բացասական յերևույթների, սովորույթների, հասա-  
րակական չարիքների գեմ (հարբեցողություն, կրոնա-  
մոլություն, անկազմակերպվածություն, պրոգուլներ  
և այլն), 4. բարձրացնել աշխատավորության հեղափո-  
խական զգոնությունը, խորացնել այդ մասսայի մեջ  
դասակարգային ատելությունը ժողովրդի թշնամիների՝  
կուրակ-դաշնակցական տարրերի նկատմամբ, 5. բար-  
ձրացնել աշխատավորության կուլտուրական մակար-  
դակը: Սովորեցնել նրանց նոր ձևով աշխատելու, յու-  
րացնելու 1-ին հնագամյակի կենսագործման հետևան-  
քով ստեղծված նոր արտազրությունը և նոր տեխնի-  
կան, և այլն: Իսկ այդ գործում խոշոր չափով կարող  
է ոժանդակության գալ կազմված անցագիրը: Վորպես-  
զի հնարավոր լինի կինո մասսայական աշխատանքնե-  
րը սերտորեն շաղկապել տվյալ շրջանի տնտեսական-  
կուլտուրական շինարարության կոնկրետ խնդիրների  
հետ և ճշտորեն իրագործել կինո մասսայական աշխա-  
տանքների վերեռում նշված հիմնական նպատակա-  
դրումները, խիստ կանոք և անցագիրը լրացնել նոր  
փաստական մատերիալներով՝ վերցրած տվյալ շրջանի  
տնտեսական-քաղաքական կյանքից և այլն:

Անցագիրը չափազանց ոգտակար կինո աշ-  
խատողի-մասսապիկի համար, իր մասսայական-քա-  
ղաքական աշխատանքները կազմակերպելու այն հաշ-  
վով, վորպեսով լուծում տա դիտողին հուզող, նրան  
հետաքրքրող զանազան հարցերին: Այդ իսկ պատճա-

ռով մասսապիկի տմբոզջ խնդիրը պիտի լինի իր աշ-  
խատանքները կազմակերպել այն հաշվով, զորպեսզի  
աշխատավորը գալով կինո վոչ միայն զվարճանա, հա-  
զուրդ տա իր կուլտուրական, գեղարվեստական պա-  
հանջներին, այլև ստանա իր վաղվա աշխատանքների  
ծրագիրը՝ դաշտում կամ գործարանում:

### Լինենք ՄԱՍՍԱՎԻԿՆԵՐ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԿՑԵՐ

Նկարի ցուցադրումը կարելի յե կազմակերպել  
զանազան յեղանակով ու ձեռքով: Կարելի յե որինակ՝  
նախորոք կազմակերպել զրոյց՝ նկարում շոշափվող  
հարցերի շուրջը, կամ այդ հարցերը փոքրիկ հոդվածով  
կարելի յե լուսաբանել տեղական պատի լրագրում:  
Կամ առաջիկա կինո-սեանսի վերաբերյալ կարելի յե  
կազմակերպել ֆոտո նկարների և այլ նյութերի ցու-  
ցահանդես, ինչպես և աչքի ընկնող վայրում կախ տալ  
պատկերավոր աֆիշա-համատարարություն, փակցնել  
նկարի բովանդակության համապատասխանող լոգունդ-  
ներ և այլն:

Դրա հետ միասին զանազան ձևով և կատարվում  
նկարի ցուցադրումը: Մի գեպքում ուղղակի բավակա-  
նանում են նկարի սոսկ ցուցադրումով, վորը միան-  
գամայն անընդունելի ձև և, առանձնապես գյուղական  
վըաններում, ուր կուլտուրական վորոշ հետամնացու-  
թյան և ոռւսերենին չտիրապետելու հետեանքով հա-  
ճախ անմատչելի յե դառնում նկարի բովանդակու-  
թյունը:

Ուրիշ գեպքում ցուցադրման միջոցին կարդաց-  
վում են մակագրությունները, բացարվում առանձին  
մտաերը, կազմակերպում են զրոյց, ցուցահանդես և  
այլն:

Այդ բոլորը մի ավելորդ անգամ ապացուցում են, վոր կինո աշխատողին՝ սկսած կինո մեխանիկից, մեծ սլահանջներ են առաջադրվում, և վոր նա անպայմանորեն պետք ե նախասղատրաստվի կատարելու այդ պահանջները։ Այլ կերպ ասած, կինո-աշխատողի և կինո-մեխանիկի աշխատանքը չպետք ե սահմանափակվի միայն կինո-ապարատը գործի գնելով։ զա նրա աշխատանքի մի մասը, այն ել վոչ ամենակարևոր մասն և կազմում։ Կինո աշխատողը պետք ե միաժամանակ մասսայական-քաղլուս աշխատող լինի, վոր նրա աշխատանքների կարևորագույն մասը կազմի մասսայական-քաղաքական, դաստիրակշական աշխատանքները առանց դրա յերեք հնարավոր չե կինոն դարձնել սոցիալիզմը կառուցող միլիոնափոր մասսաների կոմունիստական դաստիրակության հզոր միջոց։

Բնական ե, վոր ամբողջ կազմակերպչական, մասսայական աշխատանքները, վորոնք քանի զնում ավելի կարենը նշանակություն են՝ ստանում, չեն կարող կատարվել միմիայն կինո աշխատողների միջոցով։ Այդ իսկ պատճառով միանգամայն անթույլատրելի պիտի համարել շատ շրջանային ու պյուղական կազմակերպությունների առանձին ընկերների անտարբեր վերաբերմունքը դեպի կինո մասսայական աշխատանքները։

Կինո մասսայական աշխատանքների կազմակերպման և ղեկավարման գործն ամբողջապես պետք ե իշրենց ձեռքը վերցնեն շրջանային, կուսակցական, կոմյերիտ միության կոմիտեների կուլտովորպները և ՄՏԿ քաղաքինները։ Նրանք անպայմանորեն պետք ե իշրենց կինո աշխատողի հետ միասին կազմեն այս կամ այն կինոնկարի շուրջը կազմակերպվելիք մասսայական աշխատանքների պլանը, տրամադրեն համապատաս-

խան կաղըեր այլ աշխատանքների կատարման համար, կատարեն աշխատանքի բաժանում և այլն, և այլն։

Այսուհետև այդ աշխատանքներում անպայման անհրաժեշտ է լայնորեն ներգրավել հւսուցչությանը, կուլտ բանակայիններին, քաղլուս աշխատողներին, (կոլլեգային ակումբի, կարմիր անկյան վարիչներին), կուլտ կազմակերպիչ ընթերցողներին), գյուղատնտեսներին, բժիշկներին և այլն։ Դեռ ավելին՝ կոլխոզ ակումբների քաղլուս աշխատանքների մեջ անպայման դդալի տեղ պետք ե տրվի կինո մասսայական աշխատանքներին։ Նա անպայման պիտի ունենա այդ աշխատանքների պլանը՝ համաձայնեցված շրջանային կուսկոմի, ՄՏԿ քաղբաժնի և կինո աշխատողի հետ։ Մասսայական աշխատանքների մեջ անպայման անհրաժեշտ և ներգրավել նաև կուլտնեսային ավտիվը, կոմունուլին, կին կազմակերպությանը և այլն։

Այդ աշխատանքների ամբողջ հաջողությունը կա ունի նաև կինո աշխատանքների պլանավորման հետ։ Մինչև հիմա վոչ միայն մեր շրջանային կինո-աշխատողները, կինոբազաները, այլև Հայկինոն չունեն մակար հաստատուն ռեպերտուար և շրջաններին նկարներով ապահովելու գործը մատնված ե հաճախ պատճառականության։ Անհրաժեշտ և արժատականորեն փոխել այս դրությունը։

Աշխատանքի պլանավորման հետ միասին գյուղական, կոլխոզային կազմակերպությունները, կինո աշխատողները պիտի կատարեն նաև անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքը։

Անհրաժեշտ ե յուրաքանչյուր գյուղում առանձնացնել առանձին ձեռներեց ընկերների, նրանց վրա գնել կինո մասսայական աշխատանքների կատարման պարտականությունը, նրանց կարողություններին հա-

**մապատասխան:** Ողբնակ, մեկին՝ կարելի յի հանձնարարել լողունգների և ավելաների գրելը, մյուսին՝ կոլխոպային բրիդադաներում նկարի շուրջը զրուցներ կազմակերելը, Յ-ին՝ պատի լրագրում հոդված գրելը, Գ-ին՝ կոլխոպի կյանքից նկարի բովանդակությանը համապատասխանող նյութերի հավաքումը, Ծ-ին՝ նկարի բացատրությունը և վերջում կարծիքների ամփոփումը և այլն: Առանձնացված ընկերներից հիմնադրվում ե կինո սիրողների, կամ կինո մասսավիկների խմբակ, վորոնց ղեկավարությունը պիտի գտնվի կինոբազաների ձեռքին: Այդ խմբակների հետ գերջինս պիտի կատարի անհրաժեշտ աշխատանք (սեմինարներ, կինո սեանսի, դիսպուտի միատեղ կազմակերպում և այլն): Ուր այդպիսի խմբակ հնարավոր չի կազմակերպել, անհրաժեշտ է առանձնացնել կինո լիազոր:

Կինո սիրողների խմբակի և լիազորի հիմնական ֆունկցիան պիտի լինի մասսայական աշխատանքի կազմակերպումը: Նրանք պիտի նախապատրաստեն առաջիկա սեանսը, մասսայի ուշադրությունը ընենեն ցուցադրվելիք նկարի վրա, նկարը շրջապատեն տեղական նյութով, կազմակերպեն զրույց, ղեկուցում, ցուցահանդես, լրազրային աշխատանք և այլն: Ակտիվը պիտի լայն ոժանդակություն ցույց տա կոլխողների և այլ կազմակերպությունների հետ պայմանագրի կնքման գործում, նյութեր պատրաստի լուսաթերթի համար, կամ լույս ընծայի այդպիսին և այլն: Կինո սիրողների խմբակը և լիազորը մշտական կազմականություն կինո բազավարի կամ մեխանիկի հետ և տեղյակ են պահում զյուղացիներին առաջիկա կինո սեանսի մասին՝ իրենց կատարելիք մասսայական աշխատանքների միջոցով: Կինո աշխատողը պարտավոր ե կինո սիրող-

ներին, կամ լիազորին վաղորոք հանդամանորեն ծանոթ պահել նկարի բովանդակության ձեռնարկվելիք մասսայական աշխատանքների ձեռքի մասին, վորապեսին նրան ուղարկվում է նկարի հետ միասին (լիբրետոտո):

Խմբուկը, լիազորը կամ կինո աշխատողը անպայման պարտավոր են հաճախակի կինո սեանսից հետո կատարել դիտողների կարծիքների հաշվառում: Նրանք պիտի կազմակերպեն նաև նկարների մասսայական քննադատություն, մասսայի դիտողությունները, պահանջները և կարծիքները զրի առնեն, ուղարկեն կինո կազմակերպություններին և թերթերին՝ ոգտագործելու նպատակով:

Կինո աշխատանքներին չափազանց խանգարում ե այն միանգամայն անթույլատրելի կարծիքը, վորը կաշատ զյուղական և շրջանային աշխատողների մեջ, (ինչպես նշում և Համ Կոմկուսի կենակոմն իր մայիսի-7-ի վորոշան մեջ), ըստ վորի զյուղի կինո սպասարկումը դիտվում ե վորպես ձրի և բարեգործական մի գործ, վորն արժանի չե վորեւ ուշադրության կամ ոժանդակության: Բնական ե, վոր ինչպես կինո աշխատողների, նույնպես և կինո սիրողների ձեռնարկելիք աշխատանքների հաջողությունը կախված է այն բանից, թե վորքանով հաջողությամբ կհաղթահարվեն այդ հետամնաց տրամադրությունները և լայն մասսաները կհամախմբեն կինոյի շուրջը:

### ՎԻՆՈ-ՍԵԱՆՑԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՄԱՍՈՒՄԸ

Այժմ անցնենք կինո մասսայական աշխատանքների առանձին ձեռքի լուսաթանմանը, կինո սեանսի նախապատրաստման աշխատանքները սովորաբար սկսվում են նայտարարություն-աժիշտակոց: Սակայն մին-

չեղ այժմ աֆիշաները գերազանցապես հայտարարության ընույթ են ունեցել. մինչդեռ աֆիշան պիտի նպատակ ունենա նախապատրաստելու դիտող հասարակությանն առաջիկա կինո սեանսի համար, իր բովանդակությամբ շաբթի այդ հասարակության հետաքրքրությունը և նրանց ուշադրությունը սրբ այն հանդուցային խնդիրների վրա, վորոնք շոշափվում են նկարում. Նախապատրաստված դիտողը ընականորեն լարված հետաքրքրությամբ դիտելով նկարը, ի վիճակի կի կինո նաև ամբողջական պատկերացում ունենալ նրա մասին և գտնելու իրեն հուզող հարցերի լուծումը. Այդ իսկ պատճառով կինո-մասսայական աշխատանքի կազմակերպիչը պիտի վերջ տա աֆիշների շարլոն ձևին և նկարի ռեկլամացիան դնի այն հաշվով, վոր արտահայտի նկարի հանդուցային խընդիրները և շաբթի մասսայի հետաքրքրությունը. Որինակ՝ «Տաք այրուն» նկարի ռեկլամները կարելի յե գրել հետեւյալ կերպ. «յեթե ուզում ես իմանալ ինչ-պիսի մարդիկ և պատրաստում կարմիր բանակը, արի կինո, դիտիր «Տաք այրուն» նկարը. կամ «յեթե ուզում ես իմանալ ինչ ետալիս կազմակերպված կոլեկտիվ տնտեսությունը գյուղացուն, արի կինո, դիտիր «Յերկրորդ քայլ» նկարը. բացատրական աշխատանքները և հարցերի պատասխանը կտա այս ինչ ընկերը»: Կամ թեկուզ վերցնենք «Մարդ և կապիկ» նկարը, վորը չափազանց հարմար նկար և հակակրոնական ազիտացիայի համար, այդ նկարի ռեկլամը կարելի յե գրել այսպես՝ «յեթե ուզում ես իմանալ վորուելիք ետաձացել մարդը, շտապիր կինո, դիտիր «Մարդ և կապիկ» նկարը: Մարդու ծագման մասին խոսելու յե (ազգանուն), վերջում լինելու յե հարց ու պատասխանի յերեկո, վիկտորինա, պարզեատրումք և այլն:

Ամեն կերպ պետք ե աշխատել նկարի բովանդակությանը համապատասխանող տեղակտոն յերեւոյթներ լուսաբանել ուկելամայում, շաղկապել տեղական խընդիրների հետ, որպանական կապ ստեղծելով նկարի բովանդակության և տեղական խնդիրների միջև. Որինակ՝ «Անտապատի մարդաբիտը» նկարը համապատասխանում ե մեր ամբողջ ջրանցքային շինուաթրությանը և վուուման աշխատանքներին, հետեւապես նկարի ցուցադրման սեկլաման կարելի յե զբել այսպես. «Ջրանցքային շինուաթրությունը յերկրին տալիս ե անչափ հարստություն. այդ բանում համոզվելու համար անցիր կինո, և նայիր «Անտապատի մարդաբիտը» և այլն, Ամեն մի աշխատող պիտի յելնի բերված որինակներից. և սեփական նախաձեռնությամբ կազմի աֆիշառունկերամա նկարի բովանդակությանը և արծարծվող խնդիրներին ու տվյալ վարի յուրահատկություններին համապատասխան:

38037-62 (1921)

Կինո լիազորը կամ կուլտ բանակայինը միաժամանակ պետք ե վաղորոք կոլխոզ բրիդադներում կազմակերպի թոռուցիկ զրուցյ՝ տուաջիկա կինո սեանսի մասին, անգամ հավաքի կոլտնտեսականների դիտողություններն ու առաջարկությունները ցուցադրումների, մասսայական աշխատանքների մասին:

Նույն նշատակով անպայման պետք ե լայնորեն ոգտագործել ուղիղուն, ակումբը, մամուլը:

Այդ աշխատանքների միջնորդին կինո աշխատողն անմիջական շիման մեջ ե մտնելու կենդանի. մարդկանց հետ, վորոնք իրենց պահանջներով, կուլտուրական մակարդակով, տնտեսակիցն պայմաններով ու կենցաղով մի խայտարկելու պատկեր են ներկայացնում: Բնական ե, նրանցից մուտքանացուրը ուարրեր վերաբերմունք ե ցուցաբերելու, ինչպիս դեպի նկարը,

նույնպես և դեպի մասսայական աշխատանքները Մասսայական աշխատանքների հաջող վախճանը դրա համար ել կախված է նաև առողջությայի կազմից: Արդ իսկ պատճառով՝ կինո աշխատազը պիոսի խորը կերպով ուսումնասիրի, ճանաչել առողջարկության, կադրակերպությունների հետ մեկ տեղ ստեղծի հաջմակերպված դիառների առողջության և մասսայական աշխատանքները ձեռնարկներու հաջողի առնի գիտազնիրի պատրաստականության միշտն մակարդակը: Ընկամային դուզբնեաց անհրաժեշտ և հաշմակերպել ֆիզուրային սլակառների, ֆոտո նկարների ցուցահանդես, յեթե նկարի բովանդակությունը պահանջում է, կարելի յի ֆոտո նկարներ վերցնել նաև ալյու կոլիզոզի կյանքից և դնել ցուցահանդեսում և այլն:

### ՅՈՒԹԱԴՐՄԱՆ ՍԿՂԲԻՆ ՏԱՐՎԱԼԻՔ ԱՃԽՍԱՆԻՑՆԵՐԻ

Անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներից հետո կարևորագույն նշանակություն ունի սեանսից (ցուցադրումից) առաջ տարհեղիք մասսայական աշխատանքները, փորի նպատակը պիտի լինի առաջին հերթին ոգնելու, դիտողին յաւրացնելու, հասկանալու նկարում շոշափող խնդիրները և նրանց լուծումը և ապա համապատասխան հետևություններ կատարելու: Հարդ նկարին համապատասխան նյութի լուսաբանմամբ մոքիլիկացիայի յենթարկել դիտողին, տվյալ վայրի հիմնական տնտեսական-քաղաքական խնդիրների շուրջը, բարձրացնել նրա ակտիվությունն այդ խնդիրների լուծման դրում: Նկարի բովանդակությունը դիտողին դյուքըմբոնելի դարձնելու վրա անհրաժեշտ և լուրջ ուշադրություն դարձնել, վրովինետեւ անվարժ դիտողը, հաճախ, ի վիճակի չի հետեւ վելու դեպքերի զարգացման ընթացքին, ըմբռնելու նկարի բովանդակությունը:

Այժմ առնեք սրանից առաջ տարիվող մասսայական աշխատանքների մի քանի ձեռը: Ամենապարզ և մասսայական դրությունը ստացած ձեզ դա ցուցադրումից առաջ տրվող համառոտ գոկուցումն ե կամ զրուցը (10—15 քոպիկից վոչ ավել): Բնականորեն զեկուցման կամ զրուցի բովանդակությունը կազմելույն ցուցադրուվող նկարը և նրան համապատասխան տնդական փաստերի լուսաբանումը: Դինո մասսայական աշխատանքների կազմակեցվածման սկզբունքը պիտի լինի ասածին հերթին նկարի բովանդակությունը: Այսուհետեւ, յեթե հընարարը և, որպանական ամբողջություն ստեղծելու միջոցով լուսաբանել տեղական փաստեր, յերևույթներ, ապա պիտի կատարեն արդարիսի շաղկապում:

Ընդունենք, վոր ցուցադրում է «Խաղ Փուշ» նընկարը Զեկուցողը պիտք և համառոտ կերպով տա Պարուկուտանի կասակարգային հայաբնակությունների պատկերը, խաղիկուների պայքարի ձեռը՝ առևտուրականների, մուշտերի գեմ, կրծնական նախապաշարունքների գերն այդ պայքարում, ուռուսկան և անգիտական իմպերիալիզմի մեջնացությունները Պարսկաստանի անգորությունից և հետամնացությունից ոգտվելու գործում, աշխատավորությանը շահագործելու համար և այլն: Դրա հետ միասին զեկուցողը պիտի տա հեղափոխական մասսաների հաղթանակի նախապայմանը շահագործողների գեմ: Զեկուցումը հիմնականում պիտի հետապնդի դիտողին տալու պրոլետարիատի և ամբողջ աշխատավորության պայքարի միասնական հավատակը, նրա արմատները և կիսասպոքման ուղիները:

Բացադրական աշխատանքն այդպիսով պիտք և բոլոր նախ և առաջ նկարի բովանդակությունից, լուսաբանի նկարում արձարձվող հանգուցալին խնդիրները և սերտորեն շաղկապելով պրոլետարիատի դասակար-

գային պայքարի նպաստակներին, մասսաներին վորիլի-  
զացիայի յենթարկի այդ ինդիրների կենսագործման  
շուրջը:

Որինակ, սոց! ալիդմի շինաբարության, յերկրի  
խորուստրացման, գյուղի կուկատիվացման վերաբերյալ  
նկարների բացատրականը պետք է կատարվի այնպես,  
վոր կարողանա բարձրացնել մասսաների դասակարգա-  
յին գորությունը, աշխատանքային խանդավառությու-  
նը, հանրային գույքի պաշտպանման, աշխատանքի կազ-  
մա կերպվածության, արտադրողականության բարձրաց-  
ման, նոր տեխնիկայի յուրացման, կուլտային աւարտերի  
և նրանց վասարարական գործունեյությունը ջախջա-  
խելու, կարճ ասած—անդասակարգ սոցբալիստական  
հասարակարդ կառուցելու շուրջը:

Նկարի շուրջը ցուցաբերման սկզբին կազմակերպ-  
վող հասարակուն աշխատանքները չեն սպառվում զե-  
կուցումներով և զրուցներով: Յենելով նկարի բովան-  
դակությունից և դիտողների զարգացման մակարդակից,  
ժիանգամատին անհրաժեշտ ե կազմակերպել քաղմարտ,  
ազրումարտ, վիկտորինա, ցուցահանդեր, թուուցիկ մի-  
տինգներ և այլն, լայնորեն ուստագործելով տվյալ դյու-  
րի, շրջանի կյանքից վերցրած մատերիալական բարձրականությունը:

Որինակ՝ օջամալլուր, Աղդանշանը ջրվեժի մոտ  
և այլ հեղափոխական-պատմական նկարների շուրջը  
կարելի յե կազմակերպել քաղմարտ՝ լուսաբանելու  
նկարում շոշափված գեղքերը, Հայաստանի հեղափոխա-  
կան շարժման ետապները, տվյալ շրջանում, դյուրում  
տեղի ունեցած դասակարգային կովի ձևերն ու ետապ-  
ները և այլն: Առաջարկվող հարցերը պիտի լինեն պարզ  
ու դյուրը բռնելի:

Յեթե ցուցադրվում է անտեսության այս կամ  
այն ճյուղի վերակառուցմանը վերաբերվող նկար, ան-

հրաժեշտ է այդ դեպքում կազմակերպել տեխնիկական  
մարտ, լուսաբանել տնտեսական, տեխնիկական վերա-  
կառուցման ինդիրներն ու ուղիները, կուսակցության  
պայքարը անտեսության տեխնիկական վերակառուց-  
ման հրամար, տեխնիկային տիրապետելու կարևորու-  
թյունը, այդ աշխատանքների դրվագքը տվյալ ձեռնար-  
կում, ոյուղում, կոլխոզում և այլն:

Քաղմարտը զեկավարելու զործը բավականին  
պատասխանատու և զժվարին ինդիր և Այդ իսկ պատ-  
ճառով անհրաժեշտ է այդ գործը վաղորոք հանձնաբար-  
ել պատրաստված ընկերոջ: Սեանսի սկզբում կազմա-  
կերպիչը պիտի մի քանի բովելով հակիրճ հաղորդի  
նկարի բովանդակությունը և նրա նշանակությունը,  
վարից հետո նա հանդիսականներին առաջարկում և  
նախապես մշակված մի շարք հարցեր, բղխեցրած նկարի  
բովանդակությունը, տվյալ վայրի պրակտիկայից և  
այլն:

Որինակ՝ գաշտավաբության վերաբերվող նկարի  
շուրջը կարելի յե տալ այսպիսի հարց.—«Ի՞նչորիսի  
միջոցառումներ են հարկավոր բերքատվությունը բարձ-  
րացնելու համար: Վորոննը են ընկ. ՅԱԿՈՎԼԵՎԻ. Կող-  
մից առաջարված բերքատվության բարձրացման ծ  
նախապայմանները: «Ի՞նչպես կարելի յե ունեվոր դարձ-  
նել կոլտնտեսականներին»: Բոլոր պատասխանները  
համառոտակի զրի յեն առնվում: Գրվում ե նաև պա-  
տասխանողի ազգանունը: Սեանսի վերջում 10—15 րո-  
պերում ամփոփվում ե քաղմարտի արդյունքները, նշում  
են ճիշտ պատասխանները և ապա համառոտակի տայիս  
տվյալ դյուղում, կոլխոզում տարվելիք աշխատանքների  
պատկերը: Ճիշտ պատասխանող ընկերներն ստանում  
են համապատասխան նվերներ—զերազանցալես գրա-  
կանություն:

Սեանսի սկզբին տարվող մասայական աշխաւառնքների ամենազբավիճ և աբովանավետ ձեզ՝ ցուցահանդեսն է: Յուցահանդեսի ներգործությունը դիտողի վրա համեմատարար ավելի զորեղ է: բազմակողմանի ծուցահանդեսի նպատակը պիտի լինի ծանոթացնել մասսային տվյալ սայոնի, գյուղի ձեռք բերած նվաճումներին՝ սոցիալիստական շնորհարարության դանաշան ընազարդաներում: Յուցահանդեսի միջոցով անպայման պետք է լուսաբանվի տվյալ, վայրի աշխատանքների թերությունները, աշխատանքների կաղմակերպման վեճակը, սոցմբցակցության և հարգածայնության գիճակը, հանրային գույքի պաշտպանության հերոսները, նրա թշնամիները և այլն: Յուցահանդեսի համար Կյութ կազող և ծառայել նաև յերկու սիստեմների տնտեսական-քաղաքական կյանքին վերաբերվող տվյալների համեմատումը՝ պլանատային գիշարամանեցի ձևով և այլն:

Ծուցահանդեսի կաղմակերպման դեպքում անպայման անհրաժեշտ է լուսաբանել տվյալ վայրի, զբանի տնտեսական-քաղաքական, կուլտուրական պատկերը նախահղափոխական շրջանում, վորովհան այլպիսի համապատմներն ավելի աբտահայտիչ են դարձնում մեր հաջողությունները: Յուցահանդեսը կաղմակերպելիս անհրաժեշտ է նրան այնպիսի ձեւ տալ, զոր հնարավոր լինի ողտագործել շրջկի միջոցով:

Յուցահանդեսն անհրաժեշտ է բարձական յերեք մասի. որինակ՝ Հայաստանի խորհրդայնացման առթիվ կազմակենրպիթեք ծուցահանդեսը կարիքի յե կազմակերպել հետեւյալ սիստեմով. — 1. Հայաստանը մինչև Նոյեմբերյան հեղափոխությունը, 2. Հայաստանը ըրտարական դիկտուրայի որոք—մինչեւ ցուցահանդեսի որը; 3. սոցիալիստական շնորհարարության առօ-

ջիկա խնդիրները: Այդ բաժիններն անհրաժեշտ են վերածել մոտավորապես հետևյալ յենթարաժենների. —

1. Արդյունաբերություն, 2. գյուղատնտեսություն (հան անսանսպահնություն), 3. կուլտուրա, կենցաղ և այլն: Արանք իրենց հերթին կարելի յե ճյուղավորել այսպիս՝ 1) արդյունաբերություն—ա) ծանօթ արդյունաբերություն, բ) ելեկտրիֆիկացիա, գ) թեթև արդյունաբերություն և այլն: «Սոցշինարարության առաջիկա լոգիցները» բաժնում անհրաժեշտ է լայն չափով ոգտագործել տեղական կոմիսարետ մատերիալը:

Այդ հայատակով տալիս ենք հետևյալ սխեման. —

## ՀԱՏԱՍՏԱՆԻ Ս. Խ. Հ.

1-ին թ և Փ ի ն:— Եյալիքին եր ցարի յեկ դաշնակների որո՞ն

### 1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ.

ա) ծանօթ արդյունաբերություն (պղնձարդյունաբերություն, այսքան արտադրանք, հետամնաց տեխնիկա, սեքենաշինություն չկար).

բ) ելեկտրիֆիկացիա—գրեթե չկար.

գ) թեթև արդյունաբերություն—մի քանի արհեստագործական ձևնարկներ, վորոնք դադարել ելին գործերուց՝ արդարմիջյան կոիմների հետևանքով.

դ) տրանսպորտ՝ քայլքայլած (բանվարների թիվը):

2. ԳՅՈՒՂ. Ա. Տ. ՏԵՍՈՒԻԹ ՅՈՒԻՆ.— (արտադրանքը—ցանքերի տարածությունը, անսանսպահությունը, տեխնիկական կուլտուրաները, արտադրության միջոցները, հողային հարաբերությունները, պյուղի դասակարգային դեմքը):

Տ. ԿՈՒՆՑՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԵՆՑԱՂ.

Անգրագիտ մասսաներ, վորոնք գտնվում եյին կուլակների, տերտերների ծի տակ, (դպրոցների քառակը, աշխատանքի տեղությունը, ցածր աշխատավարձ, հիվանդանոցներ, համալսարան, թատրոն, կինո, ուղիոն, բնուկարաննային ուսայմաններ և այլն),

2-րդ Բ Ա Ժ Ւ

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ, ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 13 ՏԱՐՈՒՄ ՓՈԽԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

1. Էխագաղութից Հայաստանը դարձել է ինդուստրիալ-տղթարային յերկիր, (թվիր արդյունաբերության արտադրանքի տեսակարգը կշռի մասին—ամբողջ տնտեսության արտադրանքի մեջ).

ա) ծանր արդյունաբերություն (նոր գործարաններ և նրանց ծավալը),

բ) ելեկտրիֆիկացիա (կայտների թիվը, կարողությունը),

գ) թեթև արդյունաբերություն (գործարանների թիվը, տեսակները, ծավալը),

դ) տրանսպորտ (նորակառույցներ, նաև խճուղիներ, ավտոմոտորիչացիա),

ե) բանվոր դասակարգի աճը (թիվը),

2. ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ա) հողային հարցի լուծումը

բ) ցանքերի տարածության և բերքատվության աճումն ըստ կուլտուրաների (թվեր),

գ) պյուղի ինդուստրացումը և սոցիալիստական վերակառուցումը (թվեր ՄՏԿ, խորհությունների

սրանց կարողությունը, կոլտնտեսության ամրացման և կուլակաւթյան լիկիդացիայի մասին).

դ) կոլտնտեսականի յեկամտի աճումը (թվեր):

3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՃՈՒՄ Ե ԶԵՎՈՎ ԱԶԳԱ-ՑԻՆ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՄԲ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԿՈՒՆՑՈՒ-ՑԱՆ.

ա) գրագիտության առկոսը.

բ) տարրական և միջնակարգ դպրոցների թիվը.

շ) ինտուիտուտները պատրաստում են սոցիալիզմի կազմակերպիչ կազմեր (թվեր).

դ) ոսդիո, կինո, թատրոն (ձեռնարկների թիվը).

ե) մամուլ և գրականություն (գրքերի և լրագրերի տիրածը, թիվը, աճումը).

շ) առողջապահություն (հիվանդանոց, մոուր, կուբուրտ, հանգստյան տուն և այլն).

է) բնակ. շինարարություն.

ը) աշխատավաճակի աճման դիագրամման (թվեր):

Ցուցահանդեսը կազմակերպողը պետք ե ամեն կերպ խուսափի տվյալները սոսկ թվերով լուսաբանելուց: Անհրաժեշտ ե գերակշռություն տալ առանձնապես ցուցահանդեսի տվյալների պատկերային ձեխն, լայն ողտագործել եքսպոնատների, մողելների յեղանակը, վորոնք ավելի արտահայտիչ ու գրավիչ են դարձնում ցուցահանդեսը: Անհրաժեշտ ե միաժամանակ յուրաքանչյուր բաժնում զետեղել ընկ. Անհնինի, ՍՏԱԼԻՆԻ, Կ. ՄԱՐՔՍԻ աշխատություններից, XVII համագումարի վորոշումներից վերցրած համապատասխան քաղվածքներ, լողունգներ: Ցուցահանդեսին պետք ե այնպիսի գասավորություն տար, վոր նա ավելի արտահայտիչ լինի, վոր հեշտ լինի հնի և նորի համեմատությունը և այլն: Այսուհետեւ անհրաժեշտ ե առանձնացնել հասուկ հերթապահ ընկեր, վորը պիտի տանի բացատրա-

կան աշխատանք, կազմակերպի զրոյց և պատասխանի ցուցահանդեսին վերաբերվող զանազան հարցերին և այլն։ Անկասկած գյուղական աշխատողները կամ կինոմեխանիկը ի վիճակի չեն լինի այդ ձեմ և ծավալի ցուցահանդես կազմակերպելու, թեկուզ հենց նրա համար, վոր ամեն մի գյուղում դժվար ե ճարել նկարիչ, չեն լինի համապատասխան տվյալներ և այլն։ Այս բանից յենելով, նման աշխատանք պիտի կատարի բաժանմունքի կուլտ աշխատողը, կամ շրջ բազայի վարիչը։ Նրանք համապատասխան տվյալներ կամ սուանում են մեղանից, կամ վերցնում են շվջորձկոմից և համապատասխան ուժերի միջոցով սկսում են ցուցահանդեսի ձեավորման աշխատանքները։ Բոլոր պլակատները, եքսպոնատները, լողունգները և այլն պիտի այնպիսի ձեռ ու ծավալ ունենան, վոր հնարավոր լինի մի վայրից մի ուրիշ վայր փոխադրելու։ Բազմակողմանի ցուցահանդեսների կազմակերպումը սովորաբար կատարվում է նշանավոր տոների կապակցությամբ։ Այդ ձեմ մասսայական աշխատանք պիտի անպայման կատարեն քաղաքային ստացիոնար կինոները, իսկ ակումբներն ու գյուղերը կարող են կազմակերպել համամատաբար փոքր ծավալի ցուցահանդես, վորը գերազանցապես լուսարանում և տվյալ դյուզի, կամ ձեռնարկի նվաճումներն ու թերությունները։

## ԿԻՆՈ ՄԵԱՆՍԻ ՄԻԶՈՑԻՆ ՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Կինո սեանսի միջոցին տարվելիք մասսայական աշխատանքը վոչ միայն լրացնում և ցուցադրման սկզբին տարած աշխատանքները, այլև նկարում շոշափված խողիբներն ավելի հասկանալի դարձնելու, նրաներգործությունն ավելի աղղու և խորը դարձնելու

կարեոր միջոցն ե։ Բացատրական մասսայական աշխատանքը տվյալ դեպքում ամբողջությամբ պետք ե բղախ ցուցադրվող նկարի բովանդակությունից։

Կինո աշխատողը կամ բացատրական աշխատանքի համար առանձնացված ընկերը, նախորոշ պիտի ուշադրությամբ դիտի նկարը, կամ կազմված լիբրետոյի միջոցով մանրամասն ծանոթանա նկարի բովանդակության հետ, այլապես միանդաման հակառակ արդյունք կատայնալիք բացատրությունը, վորը տրվում և առանց նախական դիտումի։

Սեանսի միջոցին տարվելիք աշխատանքների ամենամասսայականացված ձեռ՝ դա մակագրությունների ընթերցումն ու մեկնաբանումն ե։ Բայց այդ ձենիր աղեցությամբ չափաղանց աննշան ե։ Այդ իսկ պատճառով, զրա հետ միասին, անպայման անհրաժեշտ ե ցուցադրմանը զուդընթաց տալ նաև համառոտակի բացատրական՝ նկարի բովանդակության շուրջը։ Բնականորեն բացատրականի բնույթը, շրջանակը պետք ե բզիեցնել դիտողների զարգացման ընդհանուր մակարդակից։ Որինակ՝ յեթե հանդիսականները գերազանցապես բավականաչափ հասունացած ինտիլիդենտ մարդկէ են, ապա նրանց համար այդպիսի բացատրությունը միանդամայն ավելորդ և ձանձրալի, այդպիսի դեպքում կարելի յե հրաժարվել բացատրությունից։

Պատմական, դիտական, տեխնիկական և մասնագիտական նկարներն անպայման անհրաժեշտ և զուգակցել կինո-դասախոսությամբ։ Այդպիսի դեպքում նկարի ցուցադրումն ամբողջապես պետք ե յենթարկված լինի զեկուցման պլանին, վորպես ոժանդակ նյութ և ցուցադրվի զեկուցման պահանջին համապատասխան։

Այդ աշխատանքների մեջ անհրաժեշտ ե լայնորեն ներգրավել տվյալ շրջանի, գյուղի ուսուցչությանը։

Կյուղատնտեսին, բժշկին, տեխնիկին և մյուս կարևոր ռւժերին: Ինչպես կինո աշխատողները, նույնպես և շրջանի կուսակցական-խորհրդային կազմակերպությունները պետք ե աշխատեն շրջիկ կինոյի հետ ուղարկել նույն համապատասխան ուժ՝ կինո մասսայական աշխատանքների—գեկուցումների համար:

## Լ Ո Ւ Ա Վ Թ Ե Ր Թ

Կինո մասսայական աշխատանքներում առանձնակի կարևոր տեղ է գրավում լուսաթերթը: Լուսաթերթի միջոցով չափազանց հեշտանում է նկարի բովանդակությունը շաղկապել տվյալ գյուղի, ձեռնարկի աշխատանքների դրվագքի հետ, պատկերավոր կերպով և բազմակողմանի հորեն լուսաբանել տեղական խնդիրները, հետեւաբար աշխատավորության զգոնությունն ու յենանդը մորիլիզացիայի յենթարկել որվա հրատապ խնդիրների շուրջը, խարազանել, մերկացնել դասակարգայիններին:

Ինչպես են կազմակերպում այդ աշխատանքը: Տվյալ գյուղի կուրտ բանակայինները—լիազորները, նախորոք ծանոթանալով առաջիկայում ցուցադրվող նկարի բովանդակությանը, հավաքում են նույնանման նյութեր և լողունզներ, դիագրամների, նկարների, մակարությունների և կարիկատուրաների ձեւ տալով, խնամքով գրում են փչացած պլյունկայի վրա և վորպես լրագիր ցուցադրում, կամ կինոյի սկզբին, կամ վերջում. ցանկալի յեւ վերջում, վորպեսզի շաղկապումն ավելի արդյունավետ լինի:

Ըստուննք, վոր նկարը ցույց ե տալիս բամբակի հավաքի աշխատանքները: Այդ գեղքում լուսաթերթը պետք ե սկսել այսպիս: — «Մենք տեսանք, թե ինչպես

պետք ե պայքարել բամբակի բերքը հավաքելու համար: Այժմ տեսնենք թե մեր կոլխոզն ինչպես և կատարում այդ աշխատանքը և ով ինչպես և պայքարում բամբակի հաջող բերքահավաքի համար: Ովքեր են, վորխանգարում են բամբակի հավաքը և այլն: Մասսայական աշխատանքի այս ձևի գործադրումը կատարվել է Ուրալում և ուրիշ վայրերում և փայլուն արդյունքներ և տվյալ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է լայնորեն ոգտվել նաև այդ ձևից: Այդ ձևի կենսագործումը պիտի ձեռնարկեն շրջանային կինո բազաները, ոգտագործելով շրջանային բազաների հետ ուղարկվում և գյուղերը: Կազմված լուսաթերթը շրջիկի հետ ուղարկվում և գյուղերը: Այդպիսի գեղքում լուսաթերթի միջոցով լուսաբանվում են վոչ միայն մեկ գյուղի, այլ ամբողջ շրջանի աշխատանքների պատկերը: Դա մի կարևոր միջոց է գրական փորձի փոխանակման համար:

## ՄԵԱՆՍԻՑ ՀԵՏՈ ՏԱՐՎԵԼԻՔ ԿԻՆՈ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Զբույցների, դասախոսությունների և քաղմարտերի կազմակերպումով, մենք հանդիսատեսի մեջ միաժամանակ առաջացնում ենք մի շարք հարցեր, թե ընդհանուր ընույթի և թե իր շրջապատին վերաբերվող առորյա խնդիրների շուրջը: Բնական և, վոր նա անպայման պիտի շահագրգովի, պարզելու առաջադրված խնդիրների ճշությունը, ստանալու միջտ պատասխանիքներն հուզող հարցերին, ստանալու իր վաղվա անելիքների մասին հստակ և գործնական ցուցմունքներ: Կիմողաչափական-պրոպագանդիստական աշխատանքներն աղելի զորեղ ներդրություն կունենան, հանդիսատեսին ավելի կամախմբեն պրակտիկ խնդիր-

Ների կենսագործման շուրջը միայն այն դեպքում, յերբ հանրագումաբի բերդին սեանսի սկզբին և միջոցին կտարկված մասսայական աշխատանքները, յեթե այդ աշխատանքները կտորացվեն սեանսի վերջում կաղմակերպվելիք մի շարք մասսայական-դաստիարակչական աշխատանքներով։ Սեանսի վերջում ձեռնարկվելիք աշխատանքները միաժամանակ պիտի նախատելուննան կազմակերպելու հանդիսատեսի ակտիվ վերաբերմունքը՝ հանգեց կինո նկարի։ Հանդես բերելով դիտող հասարակության ակտիվ վերաբերմունքը ցուցադրվող նկարի շուրջը և լրջորեն հաշվի առնելով նրանց դիտադրությունները, կինո մասսավիճը դրանով իսկ հասարակություն կունենա պարզելու հասարակության կուլտուրական մակարդակը, նրա պահանջները, նրանցում յեղած տրամադրությունները, հուզող հարցերը և այլն, հետագայում ավելի նպատակահարմար ձևով կազմակերպելու իր աշխատանքները, մասսայի կուլտուրական պահանջներին ավելի համապատասխանող ռեակտուար կազմելու։

Այժմ քննենք այդ աշխատանքների կազմակերպման մի քանի ձևերն ու նրանց բովանդակությունը։

Սեանսի սկզբին կազմակերպվող քաղմարտերը և վիկտորինաները բնականորեն հանդիսատեսի ուշադրությունն այս կամ այն չափով քենուում են նկարում շոշափվող խնդիրների վրա։ Այդ լարվածությունը պահապահու և ապա սեանսի վերջում կազմակերպվող աշխատանքներին ակտիվ մասնակից դարձնելու համար, անհրաժեշտ և առաջադրված հարցերին տրված պատասխանների ճշտությունը լուսաբանել սեանսի վերջում, միաժամանակ գնելով հանդիսատեսների քննադատությանը ցուցադրված նկարը։ Այդ աշխատանքների դեկավարությունը պիտի ե կատարի պատրաստված ըն-

կեր, (անպայման պետք ե դեկավարի այն ընկերը, ով սկզբին տարել ե մասսայական աշխատանքների դեկավարությունը)։ Քննադատությունը պիտք ե սկսել պարզ դրույցի ձևով և զեկավարը պիտք ե անպայման դրույցը և յերաշխները տանի վորոշ ուղղությամբ, լուծելու առաջարկված խնդիրները, շաղկապի տեղի խընդիրների հետ և լայնորեն լուսաբանի տեղական փաստերը, իսկ վերջում դեկավարը պիտք ե ամփոփի և յեղակացություններ հանի։

Զրույցի կամ դիսպուտի միջոցին անխուսափելիորեն կառաջանան այնպիսի հարցեր, վորոնց պատասխանը կարող ե զեկավարը չգիտենալ։ Այդպիսի դեպքերում նա պարտավոր ե հարցի պատասխանը հետաձգել։ Հաճախ վորոշ ընկերներ դատում են այսպիս։ — «Պատասխանիր վստահորեն, թեեկուզ՝ սիալ, վոր հեղինակությունդ չընկնի»։ Այն գեղքում, յերբ քննադատությունը կազմակերպվում է առանց նախնական հարցերի առաջարկման, զեկավարը պարտավոր ե նկարի հանդուցային խնդիրների շուրջը ներածական խոսք տեսլ այդ խնդիրները սերտորեն շաղկապելով տեղական հարցերի հետ և ներածականից հետո արդեն սկսվում ե հանդիսատեսների յելությունները նկարի շուրջը։ Զափազանց ցանկալի և նպատակահարմար ե քննադատությունը կազմակերպել սեանսից անմիջապես հետո, վորովհետև այդ միջոցին, ինչպես սեանսի սկզբում առաջադրված խնդիրները, նույնպես և նկարի թողածապավորությունները գեռ ես թարմ են հանդիսականների ուղեղներում։

Քննադատության միջոցին անկասկած հավաքավելու յեն մի շարք արժեքավոր նյութեր, գիտողություններ և առաջարկներ ինչպես նկարի, նույնպես և տվյալ վայրի համապատասխան խնդիրների մասին։

Միանգամայն անհրաժեշտ և վոչ միայն սահմանափակվել այդ բոլորն ի մի ամփոփելով վերջին խոսքում, այլև համապատասխան գործնական աշխատանք ծավալել գիտողությունները և առաջարկները կենսագործելու ուղղությամբ: Զրույցի դեկավարը, մասսավիճել պարտավոր և հանդիսատեսների հետ միասին այդ բոլորը ձևակերպել և հանձնարարել համապատասխան կազմակերպություններին կատարելու: Զափաղանց նպատակարմար և հենց նույն միջոցին աշխատանքներն այնպէս կազմակերպել վոր ինչպես առանձին աշխատողները, նույնպես և կոլտնտեսային, խորհունտեսային առանձին բրիգադները, կամ ողակները, վերջում կոնժրետ պարտականություն ստանձնեն իրենց աշխատանքների վերաբերյալ, վորպիսին պետք է ձևակերպել իրեն սոցմքման պայմանագիր, վորի կիրառման վրա հսկում և կոլտնտեսության դիրեկցիան կամ այլ կազմակերպություն:

Հնարավոր և նաև կազմակերպել կոլեկտիվ ռեցենդիս: Տվյալ դեպքում աշխատանքները պետք են տարվեն նկարը բազմակերպմանիորեն վերլուծելու, նրա դադարական կողմը կուսակցականորեն ճիշտ գնահատելու ուղղությամբ: Մասսայական աշխատանքները դեկավարողի անմիջական խնդիրը ավյալ դեպքում պետք է լինի ոժանդակել հանդիսատեսին ըմբռնելու կինո մատերիալի հանգուցային խնդիրները, լրիվ և ամբողջական դադարիաք կազմելու ցուցադրվող նկարի մասին: Դրա համար նա պարտավոր է ցուցադրման սկզբին 10—15 րոպեյով ներածական խոսք ասել նկարի հանգուցային խնդիրների շուրջը և ապա առաջադրել մի քանի հիմնական հարցեր, վարոնց շուրջը պետք են արտահայտվեն հանդիսատեսները: Սեանսից հետո անպայման պետք է բացել մտքերի փոխանակությունը:

Կարեւոր և հաշվի առնել, ինչ նոր բան տվեց նկարը դիտողին, ինչը դուք յեկավ նրան տվյալ նկարում: Այդ բոլորից հետո դեկավարն ի մի յե ամփոփում արտահայտված կարծիքները, զբանցում դիտողությունները: Այդ տեսակներից նկարի այդորինակ կոլեկտիվ գնահատումը խոշոր ոժանդակություն ցույց կտա կինո արտադրությանը: Ինչպես կինոյի, նույնպես և ավյալ ձեռնարկի, գյուղի, կոլտնտեսության աշխատանքների մասին արված դիտողությունների կենսագործման, նրան տվյած ոգուաների մասին, անողայժման կինո մասսայական աշխատողը պարտավոր և այս կամ այն ձեռվ տեղյակ պահել հանդիսատեսներին, հաշվետու զառնալ դիտողների առաջ: Զափաղանց անհրաժեշտ և կինո մասսայական աշխատանքների մասին անհրաժեշտ և հաճախակի հոդվածներ, լրագրական իմֆորմացիաներ տպագրել տեղական մասուցման կողեկտիվ ուղենադիրան, վորպես կազմակերպված հասարակական կարծիք, նույնպես պետք են տպագրել տեղական լրագրում: Միաժամանակ անհրաժեշտ և լրագրի միջոցով հաշիվ տալ հասարակացնությանը՝ արված առաջարկների կենսագործման մասին: Հաշվետվության այդ ձեռ բնականորեն մեծ ակտիվություն կառաջացնի հանդիսականի մեջ Յեթե նա տեսնում է, վոր իր առաջարկներին մոտենում են խնամքով և չեն թողնում անհետանք, ապա նա մյուս անգամ ավելի ակտիվ մասնակցություն կունենա նկարների քննարկմանը:

## ՈՒՍՈՒՄՆԱԾԻՐԵԼ ԴԻՏՈՂԻՆ

Կինո աշխատանքների վորպակի ցածրությունը պիտի բացատրել նույնական վոր դեռևս մեզ մոտ չի ստեղծված կազմակերպված հասարակացնություն

կինոյի շուրջը: Մենք մինչև հիմա կանոնավոր չենք  
գրադպի դիտողի ուսումնաբրությամբ, նրա դիտողու-  
թյունների, կարծիքների և գեղարվեստական պահանջ-  
ների հաշվառման ինդիքներով: Իսկ այդ հաշվառումը  
կարերագույն նշանակություն ունի վոչ միայն կինո  
սպասարկման կարգավորման, այլ և կինո արտադրու-  
թյան համար: Այդ դիտողությունների, առաջարկների  
միջոցով անպայման կինո ստեղծագործական պերսոնալը  
հնարավորություն կունենա մոտիկից ծանոթանալ դի-  
տող հասարակության գեղարվեստական պահանջներին  
և դրան համապատասխան արտադրանք կտա: Անկաս-  
կած դիտողի ուսումնասիրություն ուղղությամբ նշված  
կինո մասսայական աշխատանքները բավականին հա-  
րուստ նյութ կարող են լտալ, բայց դա սմենին չի  
նշանակում, վոր կինո մասսավիկը հատկապես չպիտի  
զբագի դիտողի բազմակողմանի ուսումնասիրության  
ինդիք և միայն պիտի բավականանու դիմուաների:  
դասախոսությունների, քաղ մարտերի տված նյութե-  
րով: Մենք պիտի լրջորեն ուսումնասիրենք դիտող հա-  
սարակությունը, հաշվի առնենք նրա պահանջները  
և այլն:

Դիտողի ուսումնասիրության մի քանի ձեւը կո-  
յություն ունի: Ամենանպատականարմար ձեւը կոյ-  
տա՝ անկետային ուսումնասիրությունն և: Անկետայի-  
միջոցով կաբելի յե մեծ թվով մարդ ընդգրկել և ստաց-  
ված նյութերը հեշտ և մի հայտարարի բերել Դրա հա-  
մար անկետան պիտի զբվի կարճ, հասկանալի, հար-  
ցելը պիտի զնել այնպես, վոր լրացնողը կարողանա  
մի քանի խոսքով պատասխաներ Պետք և անկետան  
մի քանի խոսքով պատասխաներ Պետք և անկետան

- Անկետան պիտի կազմված լինի մոտավորապես  
ճիշտեալ հարցերով:—
1. ազգանուն, անուն.
  2. հասակը.
  3. սպիտական գրությունը (բանվոր, կոլտնտե-  
սական, ծառայող, մենատնտես, այլք, և այլն—ընդգծել).
  4. մասնագիտություն.
  5. կրթություն.
  6. ի՞նչ նկարներ ե դիտել առաջներում.
  7. ի՞նչ թերություններ եք գիտել տվյալ նկարում.
  8. ձեր կարծիքը ցուցադրման պրոցեսի մասին.
  9. ձեր ցանկությունները՝
    - ա) նկարի մասին.
    - բ) ցուցադրման մասին.
    - գ) քաղլուսաշխատանքի մասին:
  2. բդ և արժեքավոր ձեւը դիտողի անհատական  
ուսումնասիրության բնագավառում հանդիսանում և  
«դիտողների գիրքը» կամ «դիտողների գնահատական-  
ների գիրք»-ը: Այս ձեւը, չնայած հասարակ և, ուրեմն  
գործադրելի բոլոր կինոներում, բայց ավելի որինկա-  
վորեն և զբանելու դիտողի վերաբերմունքը գեղի-  
նկարը, կամ կինո մասսայական աշխատանքը, Դրա  
համար հարկավոր և աչքի ընկնող տեղում զնել մի-  
ընդհանուր տեսքը, մատիտ և համապատասխան լողուն-  
գով հրավիրել դիտողին զրի առնելու իր տպավորու-  
թյուններն ու առաջարկությունները նկարի մասին:  
«Դիտողի գիրք»ը իր շաշափելի արցյունքները կտա  
միայն այն ժամանակ, յերբ կինո կազմակերպություն-  
ները վոչ միայն հաշվի յեն առնում բոլոր արժեքավոր  
դիտողությունները, այլ և այն ժամանակ, յերբ գործի-  
կվերածվեն այդ առաջարկները և դիտողությունները:  
Այդ ձեւ ավելի արդյունավետ դարձնելու համար, հար-

կալոր և ինֆորմացիա տալ դիտողներին՝ առաջարկությունների կենսագործման ընթացքի մասին:

Այսուհետեւ հարկավոր և կինոներում ունենալ դիտողությունների ու առաջարկությունների հատուկ արկղներ, առաջնը՝ նկարը հավանողների և շրջը՝ չհավանողների համար — համապատասխան մակագրությամբ:

Դիտողի ուսումնասիրության կարևորագույն միջոց և պատի լրագիրը: Լրագրի միջոցով անհրաժեշտ է լրսաբանները «դիտողի գրքի» առաջարկները, նբանց կենսագործման արդյունքները, առանձին ուեցենզիաներ և այլն: Պատի լրագիրը միաժամանակ հնարավորություն և ընձեռում խորհրդային հասարակայնություն ստեղծելու կինոյի շուրջը և ստեղծելու մշտական ակտիվ:

Բացի նշված ձևերից գոյություն ունի մի շարք այլ ձևեր ևս. վերջում կանգ առնենք դիտողների կոնֆիդենտների վրա և վերջացնենք:

Դիտող հասարակության կողեկտիվ ուսումնասիրման ամենակարևոր միջոցը — դա դիտողների կոնֆիդենտների կազմակերպումն է: Դիտողների կոնֆիդենտներում անհրաժեշտ է քննության առարկա դարձնել վոչ միայն առանձին կինո նկարներ, այլ և մի շարք ընդհանուր կարգի խնդիրներ, ինչպիսիք են՝ սցենարիաների քննարկումը, կինո խրոնիկայի հերթական խնդիրները, թեմատիկ պլանը, կինո-աշխատողի հաշվետումը, կինո մասսայական աշխատանքների խնդիրները և այլն:

Կասկած չի կարող լինել, վոր այդ բոլոր աշխատանքները հաջողությամբ, առանց քաղաքական սխալների կատարելու համար, պետք և շրջանային կուսակցական, կոմյերիտական կազմակերպությունները, Մ. Տ. Կ

քաղբաժիններն ամենաակտիվ և ամիջական մասնակցությունն ունենան, դեռ ավելին, անմիջականորեն դեկավարեն այդ աշխատանքները: Նշված կինո մասսայական աշխատանքների բոլոր ձևերը հնարավոր չեն, ի հարկե, լրիվ չափով կիրառել թե գյուղում և թե քաղաքում: Պետք և շեշտել վոր մասսայական աշխատանքի այս կամ այն ձևերի կիրառումը նախ և առաջ կախված է այն բանից, թե ինչպիսի ուժեր ունի տվյալ վայրը, ապա՝ ինչպիսի զարգացման մակարդակ ունի հանդիսատեսը և այլն: Դրա համար ել մասսայական աշխատանքի այս կամ այն ձևի ընտբությունը, վորը ովհատի բղիքի նկարի բովանդակությունից, թողնում ենք մասսայական աշխատողի հայեցողությանը: Դրա հետ միասին պետք է շեշտենք, վոր նկարի բովանդակության համառոտակի լրտաբանումը, մակադրությունների ընթերցումը, անհատական, խմբակային ագիտացիան, թեթև խնդիրների շուրջը քաղմական գիտարինայի կազմակերպումը — սեանսի վերջում տպավորությունների հաշվառումը և այլն հնարավոր և անհրաժեշտ ե կենսագործել գերազանցապես գյուղում և բանվորական ակումբներում: Միանգամայն հնարավոր և այդ վայրերում կենսագործել նաև դիտողների ուսումնասիրության բոլոր ձևերը:

Բաղաքային կինոներում պետք է խուսափել բռվանդակության բացարությունից, լայնորեն կիրառել դասախոսությունների, դիսպուտաների, կոլեկտիվ ուսցենդիանների, ծավալուն ցուցահանդեսների սիստեմը և այլն: Այս բոլորն ամենեին չի նշանակում, վոր գլուղում պիտի հրաժարվել, ասենք, դասախոսությունների ձևերից: Ընդհակառակը, գիտական և աղբոտեխնիկական նկարները պիտի շրջապատվեն դասախոսությամբ: Միքանի խոսք հատկապես կոմյերիտական մասնակ-

ցության մասին Հայտնի յե, վոր կոմյերիտմիությունը կուտուրական հեղափոխության առաջամարտիկն եւ Այդ իսկ ուժառառով նա պիտի լինի կինո մասսայական աշխատողի առաջին շարքերում: Հենց այդ գերից յնիներով, Հայաստանի կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեն վորոշել եւ կինո մասսայական աշխատանքների շեֆությունը դնել կոմյերիտմիության կոմիտեն վորոշել եւ կինո մասսայական աշխատանքների գլուխությունը դնել կոմյերիտմիության շարքանային կազմակերպությունների վրա: Ահա այդ վորոշումը.—«Առաջարկել շրջկոմներին և բջիջներին վերցնել շրջիկ կինոների շեֆությունը, վորը կոնկրետ պետք եւ արտահայտվի նրանով, վոր շրջիկ կինոն գումար դնալիս բջիջը պարտավոր եւ կազմակերպել նրա շուրջը քաղղուս աշխատանքներ, ստեղծել հարմարություններ մեխանիկի համար (սնունդ, գիշերելու տեղ) և կառավարության վրաշման հիման վրա, տեղական խորհրդային որդանների հետ կազմակերպի շրջիկ կինոյի փոխադրման գործը մի գյուղից մյուս գյուղը: Մենք համոզված ենք, վոր այս բայլը կիշյան վորոշումը ալրջանական կոմսոմոլի կազմակերպություններն իրական գործ կրաքանչեն և վերջ կդնեն այն խայտառակ վերաբերութիւն, վորը հաճախ հանդես և գոլիս գեպի կինո մեխանիկը:

## ԶԱԽԶԱԽԵԼ ՈՊՈՐՏՅՈՒՆԻՍԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԼՐՉՈՐԵՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՎԱԿԵԼ ԱՇԽԱՑԱՆՔԻՆ

Այդ ամբողջը ցույց եւ տալիս, վոր կինո մասսայական աշխատանքները կազմակերպող ընկերոջ առաջդրած են բազմակողմանի, խիստ կարեսը և պատասխանառու խնդիրները: Կինո մասսավիկը, դա իգեռութիւնական ֆրոնտի մարտիկ եւ հանգիսանում: Այս բանը պիտի գիտակցել: Անհրաժեշտ եւ կրկին ընդգծել, վոր

ձեռնարկվելիք աշխատանքները պահանջում են, վոր կինո մասսավիկը լրջորեն պատրաստվի, խորանախնդիրների մեջ և նախապատրաստի իր ողակները: Հապճեապությունն ու անփութությունն այստեղ խիստ վտանգավոր են և կարող են լուրջ քաղաքական սխալների հանգել և այդպիսով փչացնել ամբողջ գործը:

Կինո մասսայական աշխատանքներին խոշոր չափով խանգարում եւ բավականաչափ տարածված միանգամայն վտանգավոր հանգամանքը, վոր այդ աշխատանքները թերազնահատում են, չեն կարողանում լրջորեն գնահատել կինոյի և նրա շուրջը ծավալին մասսայական աշխատանքների խոշորագույն քաղաքական, գոստիարակչական նշանակությունը 2-րդ հընգամյակի անդիրների կենսագործման ասպարիցում Արա հետ միասին խոշոր արգելակ եւ նաև կինո կազմակերպություններում բավականաչափ արժատացած նեղմանական-առկետրական տրամադրությունները: Համ կենտրոն իր 33 թ. մայիսի 7-ի վորոշման մեջ այդ մասին գրել ե, «կինոֆիկացիայի այդ բոլոր թերություններն արդյունք են այն բանի, վոր կինո կազմակերպությունները գյուղի սպասարկումը դիտում են վորպես անշահավետ և անիջյալ մի գործ, իսկ մի շարք կողմակերպություններ (տեղական գործկոմները) կինո աշխատանքը համարում են կիսաբարեգործական անպայման—ձրի սպասարկում: Կառկածից վեր ե, վոր ցույցի կինո սպասարկման բարելավումը, կինո մասսայական աշխատանքների ծավալումը հնարավոր ե միայն այն գեղքում, յերբ կուսակցական կազմակերպությունները վճռական պայցքարով կջախջախեն այդ սպարտյուննիստական տրամադրությունները և անհրաժեշտ հասարակայնություն կստեղծեն կինոյի շուրջը:

Պայքարելով այլորինակ տրամադրությունների և պրակտիկայի գեմ, կուսակցական, կոմյերիտական կազմակերպությունների, Մ. Տ. Կ. քաղբաժինների, կինո աշխատողների խնդիրը պիտի լինի լայնորեն ողտագործել կինոն «Գործես պյուղում ամենորյա քաղաքական-կուլտուրական աշխատանքների կազմակերպման գործիք, վրայես լավագույն միջոց միլիոնավոր կոլտնտեսականներին և սովորողներին սովորեցնելու սոցիալիստական խոշոր հողագործության ձեերը, պյուղատնտեսական բարդ մեքենաների խնամքի կազմակերպումն ու ոգտագործումը և ագրոտեխնիկան դյուղատնտեսության մեջ կիրառելու գործում (Կենտկոմի նույն վոլոշումից), Իսկ այդ նորատարկի կենսագործման լավագույն ուղին՝ կինո-մասսայական աշխատանքների ծավալումն ե:



ԳԻՒԾ 40 ԿՈՊ.

357



Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Массовая кино работа

Сельхозгиз

1984

Эривань